

ՕՏԱՐԱՐԱՆ ԲԱՅԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԸ ԱՐԴԻ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Յ. Ա. ԱՏԵՓԱՆՅԱՆ

Ժամանակակից հայերենի քերականության մեջ օտարաբանությունը բացատրված է իբրև օտվյալ լեզվի մեջ օտար լեզուների բառեր՝ արտահայտություններ, դարձվածներ գործածելը¹ կամ օտարալեզու՝ այլալեզու բառ, դարձվածք, արտահայտություն, հնչում, որ գործածվում է մայրենի լեզվում, թափանցում է նրա մեջ, և որի օտարամուտ լինելը (մերված չլինելը մայրենի լեզվին) խոսող հանրության կողմից գիտակցվում է, և կամ որի համարժեք բնիկ միավոր առկա է մայրենի լեզվում²:

Ա. Այտրեյանը դրանք բաժանում է մի քանի տեսակի.

1) օտար բառ, 2) օտար ձև (ածանց, բարդ, հոլով.), 3) օտար նշանակություն, 4) օտար ոճ կամ դարձված³:

Մինչ այժմ քերականության մեջ քննվել են բառային շերտի օտարաբանությունները: Շարահյուսական համակարգում տեղ գտած օտարաբանությունները ավելի պակաս ուշադրության են արժանացել, թեև լեզվաբանական շատ աշխատություններում, լեզվի գիտական քերականության ուսումնասիրություններում ներկայացվում են օտարաբան կառույցներ: Օտարալեզու կառույցները նոր չեն մեր լեզվում: Ա. Այտրեյանը, նշված աշխատության մեջ գրելով դեռևս հին լեզվի՝ գրարարի շրջանում այլ լեզուների ազդեցությունների մասին, բառերի հոլովման ու խոնարհման շեղումների կողքին նշում է «անհարազատ խնդրառություններ ու դարձվածներ»⁴:

Հայտնի է, որ լեզվական ազդեցությունները թափանցում են երկու ուղիով՝ ժողովրդական (տարբերային) և գրական: Ազդեցությունների ներթափանցման տարբերային բնորոշումը պետք է ընդունել որոշ վերապահությամբ, քանի որ ամեն մի գործընթաց արդեն իսկ կանոնարկված է: Բառային օտարաբանությունները ներթափանցում են մեծ մասամբ առաջին ուղիով:

Շարահյուսական համակարգի ազդեցությունները անցնում են հիմնականում գրական ճանապարհով: Եվ պատահական չէ, որ «անհարազատ խնդրառություններ ու դարձվածներ» հանդիպում են ամենից հաճախ զեղարվեստական, մասնավորապես թարգմանական գրականության, մամուլի և հրատարակախոսության լեզվում:

Լեզվական շերտերից ամենից արագ և մեծ չափով օտար ազդեցության է ենթարկվում բառայինը, ամենից քիչ՝ ձևաբանականը: Շարահյուսական համակարգը ազդեցության առումով միջին դիրք է գրավում:

Օտար լեզուների ազդեցությունները, լեզվական և պատմական հանգամանքներով պայմանավորված, տարբերվում են միմյանցից: Ազդեցության չափի և տևողության մասին լեզվաբաններն ունեն իրենց տեսակետները: Ա. Այտրեյանը այդ մասին գրում է. «Թէ՛ ժամանակաև թէ՛ սաստկութեամբ՝ յառաջ է տանկական տարրը՝ որ քանի մը հարիւր տարի է ի վեր այնչափ այլալլած է արդի հայերէն լեզուն. յետոյ (նորոգեալ լեզուին մեջ) գրաբարի կարծեցեալ նմանութիւններն, եւ աւելի՛՛ եւրոպական ոճերն ու դարձուածները»⁵:

Մեծանուն լեզվաբան Հր. Աճառյանը արևմտահայ մտավոր առաջընթացը կապում է Ֆրանսիական 1848 թվականի շարժումների հետ: Ե՛վ Ա. Այտրեյանի, և՛ Հր. Աճառյանի նշված աշխատություններում ամփոփված են Ֆրանսաբան կառույցներ, որոնք, աննշան բացատրությամբ, այսօր գործուն են կա՛մ արևմտահայ, կա՛մ արևելահայ գրական լեզուներում: Դրանք անմիջական կամ միջնորդված ուղիներով անցել են մեր լեզվին, ինչպես՝ առանց ասոր, շուրջ շորս

¹ Է. Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան, Երևան, 1976, էջ 1593:

² Հ. Պետրոսյան, Հայերենագիտական բառարան, Երևան, 1987, էջ 262:

³ Ա. Այտրեյան, Քննական քերականություն աշխարհաբար կամ արդի հայերեն լեզվի, Երևան, 1987, էջ 323:

⁴ Նույն տեղում, էջ 330—331:

⁵ Նույն տեղում, էջ 323:

⁶ Տե՛ս Հր. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, 11 մաս, Երևան, 1951, էջ 584:

ամիս (չորս ամսի շափ), գազանի (մը) պես, դեզագործի քով (մոտ) գնված, անխոհմ եղալ և այլն:

Քննութեան նյութ դարձնելով օտարաբան կառույցները՝ պետք է տարբերել ընդունելի և մերժելի ձևերը. եթե առաջինները հարստացնում են մեր լեզուն, ապա նույնը չի կարելի ասել մյուսների մասին, որոնք աչին ավելացնում նրա կշիռը, այլ ծանրացնում են նրա բեռը⁷:

Մեր լեզվի ամենանոր ազդեցություններից են ռուսերենի համապատասխան կառույցների հետևողութեամբ ձևավորված կառույցները: Արևելահայութեան և նրա լեզվի պատմութեանը ծանոթանալով՝ դժվար չէ նկատել, որ հայ-ռուսական առնչությունները ավելի սերտ են եղել: Արևելահայերի փոխհարաբերությունները եվրոպացիների հետ այնքան անմիջական չեն եղել, որքան ռուս ժողովրդի և ռուսերենի հետ: Սա է պատճառը, որ արևելահայ լեզվի վրա ավելի խորն է ռուսերենի ազդեցությունը: Խոսելով այս մասին՝ Շր. Աճառյանը գրում է. «Կոովկասում և մանավանդ Ռուսաստանում հայ ժողովրդին ամենօրյա շփում ունենր ոչ միայն ռուս ավելի առաջգիմ և կուլտուրական ժողովրդի հետ, այլև նրա առաջավոր տարրերի, ռուս գրականութեան, ռուս լրագրութեան, ռուս դպրոցի և ռուս թատրոնի հետ: Ռուս լեզվի ազդեցությունը մեր արևելահայ լեզվի վրա շափազանց մեծ է»⁸:

Շնորհանրապես, տվյալ լեզվի նորմավորված միավորների գոյությունը չի արգելում օտարաբան համարժեք կառույցների մուտքը: Նոր կառույցները, որ վաղ շրջանում զուգաձևեր՝ քերականական համանիշներ են, աստիճանաբար մերվում են լեզվին և երբեմն չեն ընկալվում իրրկ օտարաբանություններ:

Օտարաբան շարահյուսական կառույցների մեջ անհամեմատ մեծ թիվ են կազմում բայական կառույցները: Տարածված են նաև այլ լեզուների համապատասխան կառույցների հետևողութեամբ ստեղծված դերանվանական, կապային, շաղկապական կառույցներ. ինչպես՝ Բանն ինչումն է, Երևանը դա Հայաստանի մայրաքաղաքն է, Նա իր մոտ է, Եվագել դաշնամուրի վրա, Գունվում է փողոցի վրա, թոիչք դեպի լուսին, անցում կամուրջի վրայով, Ցանկալի է, որպեսզի երան էլ ներեին մեզ: (ԱԿԳ, 14), Նա շատ հոգսեր կունենա, որպեսզի մտածի ձեր մասին: (ԱԿԳ, 130):

ԲԱՅԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐ Բայ+անորոշ դերբայ կառույցներ

Օտարաբան կառույցների մեջ մեծ թիվ են կազմում բայական կառույցները: Դրանք խրեդրառական կառույցներ են, ինչպես՝ խանգարել խոսել, դադարել սիրել, մտածել մի բանի վրա: Անհամեմատ շատ են այն կառույցները, որոնցում

ա) անորոշ առումով անորոշ դերբայը բայի լրացում է. դադարել սիրել, ամաչել գալ, ձգտել մնալ և այլն,

բ) անորոշով դերբայական կապակցությունների կողմնակի ենթական նախադասության ենթական չէ, ինչպես՝ Այրին զնայուց հետո Ռուստամյանը նստեց, (Շ)

գ) անորոշով դերբայական կապակցությունների ենթական տրականի փոխարեն դրված է ուղղական հոլովով. ինչպես՝ Վաղն քով է պատասխան տալու Հայրենիքը դատարկվելու համար, («Ազատամարտ»)

դ) անորոշ դերբայի տրական հոլովով և համար կապով ձևավորված կառույցներ. ինչպես՝ Արդեն շափազանց ուշ էր միմյանց վերագտնելու համար: (Մ. Գ.)

Բայ+անորոշ առումով անորոշ դերբայ կառույցները մշտապես եղել են լեզվաբանների ուշադրության կենտրոնում: Սակայն դեռևս բաղադրիչների՝ միմյանց հանդեպ ունեցած հարաբերության, կապակցության եղանակի վերաբերյալ միասնական կարծիք չկա: Այս կառույցներում լեզվաբանները անորոշ դերբայը համարում են դիմավոր բայի լրացում (Մ. Արեղյան), բայի սեռից կախված՝ ուղիղ խնդիր, այլ դեպքում՝ բաղադրյալ ստորոգյալ (Մ. Գոյալուզյան), բարդ ստորոգյալ (Գ. Զահուկյան), խնդրի մի տեսակ (Ռ. Իշխանյան), գոյականաբար գործածվելիս՝ խնդիր, իրրկ բայ գործածվելիս՝ միասին կազմում են բաղադրյալ ստորոգյալ (Մ. Ասատրյան):

Կարծում ենք, որ այդ կառույցները շարահյուսորեն վերլուծելի են, առկա է ստորադասական հարաբերությունը, իսկ կապակցության եղանակը խնդրառությունն է:

Անորոշ դերբայով լրացում առնող բայերի թիվը բավականին մեծ է: Մեզ հետաքրքրում են այն բայերը, որոնք պահանջում են թեք հոլովաձևերով լրացումներ:

Ներկայացնում ենք այդ բայերի ոչ լրիվ ցանկը. ամաչել, համաձայնել, պատրաստվել, պատրաստ լինել, վախենալ, սպասել, իրավունք ունենալ, ստիպված լինել, ձգտել, մղել, մտադիր լինել, հույս ունենալ, կարիք լինել, պատճառ ունենալ, սեր ունենալ, ճգնել, հնարավոր

⁷ Պ. Սևակ, Երկերի ժողովածու, հ. III, Երևան, 1983, էջ 26:

⁸ Շր. Աճառյան, նշվ. աշխ., էջ 584—585:

րութիւն ունենալ, ցանկութիւն ունենալ, կարոտ լինել, վարժվել, դադարել, հրաժարվել, խուսափել, խույս տալ, դրզիլ և այլն: Այս բայերը ավանդաբար պահանջում են որոշակի թեք հոլովածակով լրացում, ինչպիսի՝ ամաչել խոսելուց, համաձայնել մասնակցելու, պատրաստվել մեկնելու, խուսափել հանդիպելուց, վարժվել ստելու, դադարել սիրելուց և այլն:

Ուսումնասիրութիւնները ցույց են տալիս, որ մեր լեզուն դրսևորում է որոշակի միտում. բայը անորոշ դերբայ-լրացման թեք հոլովածակ փոխարեն առնում է ուղիղ ձևը: Ժամանակին անդրադառնալով այս երևույթին՝ Մ. Արեղյանը գրել է. «Անորոշ դերբայն իբրև բայանուն իր հոլովով կախված է բայից, բայց երբ այս դերբայն անհոդ է, հաճախ տրական և հայցական հոլովներն իրար հետ շփոթվում են գրաբարի և օտար լեզուների ազդեցութեամբ»⁹:

Գրաբարով ավանդված գրականութիւն մեջ հանդիպում են անորոշ դերբայի ուղիղ և թեք հոլովածակերով կառույցներ. Չմե արժանի պաշտօն առնլոյ, այլ պաշտօն հարկանելոյ (Սզնիկ Կողբացի): Եւ իբրեւ ետես, եթէ հաստատուն կացին շոռոմբ յովստին իրևանց... դադարեցին խայնըդուր ելանել ընդ պահակն ճորայ... (Սղիշի), ... Ոչ երբէք դադարէր աստանայ ի կանաց աստանայածինս ծնուցանել (Սզնիկ Կողբացի), Բայց մեք թէպէտ և ոչ ունիմք հրաման բամբասել զիշխանս... (Սղիշի):

Համաձայն ենք Հ. Զարութիւնյանին և կարծում ենք, որ, այնուամենայնիվ, անորոշ դերբայ-լրացման ուղիղ ձևը մեր լեզվի արդի շրջանում գրաբարի անմիջական ազդեցութիւն չէ: Խոսելով անորոշի այս կիրառութեան մասին՝ նա գրում է. «Քիև երևույթը նկատելի է նաև գրաբարում, բայց կարծում ենք, գրաբարի ազդեցութեան մասին խոսելն ավելորդ է, այն փաստորեն բացառվում է, քանի որ ուղղականաձև լրացումներն ավելի շատ տարածված են ժողովրդագիտական կցական լեզվում, որի վրա գրաբարի ազդեցութիւնը բացառվում է»¹⁰:

Ավելացնենք միայն, որ ֆինարկվող կառույցները չափազանց տարածված են հատկապես Քարզմանական գրականութիւն մեջ, երբ աներևակայելի շփոթում են հայտնի են»¹¹:

Կարծիքներ կան, որ անորոշի անորոշ առումով կառույցները գրաբարյան ազդեցութիւններ են: Բայց այդ կառույցի (հրաժարվում է պատասխանել, խուսափում է հանդիպել) տարածվածութիւնը վերջին հարյուրամյակի մամուլի և Քարզմանութեան լեզվում մտածել է տալիս նրա՝ օտարաբանութիւն լինելու մասին:

Ինչպես հայտնի է, ուսուներևում, ֆրանսերենում անորոշ դերբայը չի հոլովվում և բայերի հետ առնվում է ուղիղ ձևով. *отказаться говорить*, *J'espère vous voir ce soir*.

Չանտեսելով մեր լեզվի ներքին փոխազդեցական հնարավորութիւնը (լեզվի տարբեր շրջանների, բայերի տարբեր խմբերի միջև)՝ կարծում ենք, որ անորոշ դերբայը բայի լրացում է դառնում ուղիղ ձևով, ըստ էութեան, օտար լեզուների ազդեցութեամբ:

Ըստ Արեղյանի, անորոշ դերբայ-լրացման հոլովը որոշելիս սիրբն ընդհանուր կանոն պետք է իմանալ, որ անորոշ դերբայը նույն հոլովով է գրվում, ինչ հոլովով որ գրվում է ոչ-դերբայ խնդիրը. օրինակ՝ մոռանալ, խոստանալ մի բան. ուրեմն մոռացա ասել (և ոչ ասելու), խոստացա գնալ (և ոչ գնալու). բայց դատապարտել մեկին մի բանի (մահանալ)... ուրեմն և դատապարտել մեկին մեռնելու»¹²:

ՐԱՅ + ԱՆՈՐՈՇԻ ՏՐԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐ՝

Կան բայեր, որոնց լրացումը գրվում է տրական հոլովով. սպասել, իրավումբ ունենալ, ստիպված լինել, պարտավոր լինել, ձգտել, պատրաստվել, պատրաստ լինել, մղել, մտադիր լինել, հույս ունենալ, կարիք լինել, կարիք զգալ, պատճառ ունենալ, սեր ունենալ, հնարավորութեամբ ունենալ, հնարավորութիւն տալ, ցանկութիւն ունենալ, դրզիլ և այլն: Սրանք ավանդաբար պահանջում են տրական հոլովով լրացում: Մինչդեռ գրականութեան (հատկապես Քարզմանական) և մամուլի լեզվում շատ հաճախ հանդիպում են կառույցներ, որոնցում նշված բայերի անորոշ դերբայ-լրացումը գրված է ուղիղ ձևով: Օրինակներ՝ Նա լսել էր... թե... փոքրիկ դեկիները չափազանց սեր ունեին նստել ձիերի և մատակների վրա: (Բ, հ. 1, 72), Ծս էլ հակված եմ կարծել... (ԲՄ, 98), Թնտոմյանին մի ներքին ուժ դրոց հետեւ նրանց (Շ, 2-րդ հ., 229), Ինչու եք մղում ինձ շարահոսել նրան: (ՍՄԻ, 47), ԵՔեռին պատրաստվեց ականջ դնել: (Ֆ4, 72), Բայց այդ քայլը հնարավորութիւն կտա թուլացնել ազդեցութիւնը: (Ֆ4, 73), Ինքը ևս մեծ ցանկութիւն ունի օգնել հավատարիմներին: (Ֆ4, 70), Այդ մտքից ես պատրաստ էի լաց լինել: (ԱԳ 104), Այնպես որ պատճառ չունեմ նեղանալ նրանից: (ԱԳ 28), Գրանից

⁹ Մ. Արեղյան, Հայոց լեզվի տեսութիւն, Երևան, 1965, էջ 469:

¹⁰ Հ. Զարութիւնյան, Կառավարումը ժամանակակից հայերենում, Երևան, 1983, էջ 207:

¹¹ Նույն տեղում, էջ 207:

¹² Մ. Արեղյան, Նշվ. աշխ., էջ 469:

հետո անցան տարիներ, մինչև որ ես նորից կարիք զգացի այցելել Նյու-Յորք: (XX դ. ԱՊ 547), Նշեց, որ Ռուսաստանը պատրաստ է շարունակել իր շանքերը: (Ազգ 4, 93), Պաշտպանվելու բնական ձգտումը երանց մղեց զնալ այդ քայլին: (Ազգ 4, 93):

Ուշագրավ է այն փաստը, որ նման կառույցները ընդգրկում են մեծ ժամանակաշրջան և հանդիպում են թե՛ գեղարվեստական գրականության, թե՛ մամուլի լեզվում: Ուրեմն, նման կառույցները վաղուց են ձևավորվել և մեր լեզվում արդեն չեն ընկալվում իբրև օտարաբանություն:

Դժվար չէ նկատել, որ բերված օրինակներում անորոշ դերբայ-լրացման հոլովը որոշակի շեղում է ընդհանուր կանոնից: Լեզվին հարազատ ձևերը համապատասխանաբար կլինեն. սպասում էին գտնելու, պատրաստ էի լաց լինելու, ցանկություն ունի օգնելու և այլն:

Հակառակ երևույթն է նկատվում խանգարել բայի խնդրառության մեջ: Ներգործական սեռի այս բայը իրի առման դեպքում պահանջում է ուղղականաձև ուղիղ խնդիր լրացում: Փորձել է խանգարել անդունդ տանող գործընթացները: («Երկիր»):

Սակայն հաճախակի հանդիպող կառույցները ցույց են տալիս, որ փոխվում է նաև այս բայի խնդրառությունը: Այս փոփոխությունը կատարվում է, հավանաբար, ռուսերենի ազդեցությամբ: Ռուսերենի խնդրառությամբ այդ բայը պահանջում է տրական հոլովով լրացում: Мешать (խանգարել իմաստով) брату, сестре, учене.

Անձի առման դեպքում ձևով նույնն են այս բայի հայերենի և ռուսերենի խնդիր-լրացումները: Շեղումը հրեում է իրի առման դեպքում: Հայերենի խնդրառության համաձայն այս լրացումը դրվում է ուղղական հոլովով, իսկ ռուսերենի խնդրառությամբ՝ տրականով: Եվ ահա, անկասկած, ռուսերենի ազդեցությամբ, իրի առման դեպքում ևս լրացումը դրվում է տրական հոլովով:

Եվ իրավունք ունի խանգարել այդ ծրագրերի իրականացմանը: («Երկիր»), Մենք նույնիսկ խանգարում ենք գործընթացին: («Երկիր»), Ինչ եք արել դուք, որ խանգարեք. իմ ամուսնույթյանը: (ԱԿ 16), Ինչով կարող է խանգարել կատարմանը: (ԱԿ 354):

Ակնհայտ է, որ խնդրառական տարբերակների առաջացման գործընթացում մեծ դեր ունեն այլ լեզուները: Վերջին կառույցը մեկ անգամ ևս հաստատում է, որ այլ լեզուների համարժեք միավորների ազդեցությունը նույնքան ուժեղ է, որքան լեզվի ներքին փոխազդեցական օրենքը: Այլապես տարածման այդպիսի միտում չէր դրսևորի քննարկվող կառույցը:

Այս բայի խնդրառական տեղաշարժի մասին խոսում է Հր. Աճառյանը «Հայոց լեզվի պատմության» «Ոճեր և դարձվածներ ռուսերենի հետևողությամբ» բաժնում¹³:

Բերված կառույցները հաճախ չեն ընկալվում իբրև օտար (սխալ) ձևեր: Այսինքն, նման կառույցները արդեն մերվում են մեր լեզվին: Դրանք տարբերակային ձևեր են:

Զի կարելի անտեսել, որ նման տարբերակային կառույցների կողքին տարածման միտում են դրսևորում սխալ, մերժելի ձևեր, որ, անկասկած, թարգմանական վրիպակներ են:

Ստիպել բայը վ կրավորական ածանց չի ընդունում: Արևելահայերենում միայն ստիպված լինել հարադրավոր բային է գործածական: Այս բայը պահանջում է (ինչպես տեսանք վերևում) տրական հոլովով անորոշ դերբայ-լրացում: Բայց հանդիպում են դեպքեր, երբ ստիպել բայը կրավորաձև է գործածված եղանակային ձևերում: Օրինակ՝ Նա դարձյալ ստիպվեց ընդհատել իրեն: (Ֆ. 8), Եղբայրը ստիպվեց խստորեն զգուշացնել... (Ֆ. 15), Ես ստիպվեցի լուսամուտից նայել դուրս: (Ֆ. 35), Այսպես Սթրիբլինգն ստիպվեց նորից սկսել խնայել: (Ֆ. 36):

Նույնը պետք է ասել ուզել բայի մասին, որը նույնպես չի ընդունում վ կրավորական ածանցը:

Բայց այս տեղատվությունը... չէր կարող բառերով ձևակերպել, տան դյուրանքի մեջ քայլելիս, որն անգամ ուզվում էր... (Ֆ. 10):

Մրանք սխալ կառույցներ են, մերժելի ձևեր: Բերված օրինակներում ստիպվեց ձևի փոխարեն պետք է լինի ստիպված էր, կամ ստիպված եղավ. ուզվում էր ձևը ընդհանրապես անհարիր է հայերենի լեզվամտածողությանը:

ԲԱՅ + ԱՆՈՐՈՇԻ ԲԱՅԱՌԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐ

Բայերի մի խումբ պահանջում է բացառական հոլովով անորոշ դերբայ-լրացում. ամենագործածական բայերն են՝ ամաչել, վախենալ, կաղարել, խուսափել և այլն: Հայերենի համար օրինաչափ են հետևյալ կառույցները:

Դադարեցիրք հետ նայելուց: (ԱԿ 359), Նույնպես հրաժարվում էր խմելուց: (Շ 2, 198), Զէին ամաչում տղամարդկանց հետ խոսելուց: (Բ 1, 79):

Սակայն նշված բայական կառույցներում հաճախ են հանդիպում խնդրառական տարբերակ-

¹³ Հր. Աճառյան, նշվ. աշխ., II մաս, էջ 59:

ներ, որոնցում անորոշ դիրքայ-լրացումը դրված է ուղղական հոլովով բացառական հոլովի փոխարեն:

Իհարկե նույնը չի կարելի ասել, երբ լրացումը որոշյալ առումով է կամ գոյական. վերջին դեպքում լրացումը դրվում է բացառական հոլովով, ևսորը միայն անորոշ դիրքայ-լրացման մասին է: Օրինակները շատ են հանդիպում ինչպես թարգմանական գրականության, այնպես էլ մասնույի լեզվում: Այն հանգամանքը, որ այս կառույցները տարածված են ավելի շատ թարգմանական գրականության մեջ, անկասկած վկայում է դրանց օտար ազդեցության հետևանք լինելու մասին: Հետաքրքիր երևույթ է նկատվում անցյալ դարի գրողների լեզվում: Մուրացանի «Գևորգ Մարգպետունի» պատմավեպում խույս տալ, խուսափել, դադարել բայերը գործածված են ճիշտ խնդրաբանության՝ բայ-բացառական հոլովով խնդիր.

Դեռ չէր դադարել ծերունի Սպարապետի համարը լինելուց: (Մ 338), Աշտին մի անգամ սիրողը չէր կարող այլևս դադարել սիրելուց: (Մ 38), Դադարում է այլևս... դրավելուց և ոգևորելուց: (Մ 60), Բեշիրը դադարեց գոռալուց... (Մ 241), Արիդաների խուցիրը դադարեցին ճգնարան լինելուց: (Մ 270), Խույս պիտի տանք ընդհարվելուց: (Մ 339):

Իսկ վայելեալ բայը, որ առնում է բացառական հոլովով խնդիր, պատմավեպում հանդիպում է ուղղական հոլովով լրացումներով.

Առհասարակ վախենում եմ գաղտնիքներ հայտնել կանանց: (Մ 32), Բայց, ավաղ, վախենում եմ հավատալ... (Մ 44):

Բաֆֆու ստեղծագործություններում կան և՛ բացառականով, և՛ ուղղականով կառույցներ.

Չէին ամաշում տղամարդկանց հետ խոսելուց: (Բ 1, 79), Չէ, Սայրի, իմ կարծիքով, աստված այժմ դադարել է հրաշք գործելուց: (Բ 1, 146), Բայց նրանք չէին դադարում արժանավոր հարգանքը մատուցանել: (ԲՍ 60), Բայց աղախելը հրաժարվեց, ասելով, թե ինքը կամաշեր մտնել տղամարդկանց մոտ: (Բ 1, 147):

Երվանդազոնի երկերում ևս օրինաչափ են դադարել, հրաժարվել, խույս տալ բայերի և անորոշ դիրքայի բացառական հոլովի կապակցությունները: Ինչպես՝

Ծա բուսե անգամ չէի դադարում նրա մասին մտածելուց: (Շ 1, 75), Վերջինը դրականապես հրաժարվեց խմելուց: (Շ 2, 198), ... Որ նույնպես հրաժարվում էր խմելուց: (Շ 2, 199), Այդ օրն առաջին անգամ խույս տվեց այս մասին խոսելուց: (Շ 2, 207):

Երվանդազոնի ստեղծագործություններում վայելեալ բայը ևս չեղվում է օրինաչափություններից:

Օրինակները վկայում են, որ խնդրառական այս տեղաշարժը տարածվել է վերջին շրջանում: Նման կառույցներ անհամեմատ շատ են հանդիպում հատկապես մասնույի և թարգմանական գրականության լեզվում:

Նրանք վախենում էին խախտել շրջապատի լուծությունը: (ԺՍԻ, 6), Պարոն Դը Ռամիրը շտապեց այրել այն, վախենալով ինքն իրենից ամաշել: (ՍԻ 31), Վախենում էին բավարարել նրա խնդրանքը: (ԱԿԴ 182), Նա շիկեց, կարծես վախենալով պատշաճության սահմաններից դուրս գալ: (ԺՍԻ, 36), Վախենում էր սթրած մարդուն կորստյան դատապարտել: (ԺՍԻ, 44), Դադարեցին խայտալ... ցայտադրյուրները: (Ծ 154, 93), Օրվա շոգ ծամիրին... չուրք դադարում է հոսել: (Ծ 154, 93), Էլեկտրաէներգիայի դարսերցման հետևանքով դադարեցին գործել հաղորդակցությունները: («Աղբ» 18, 93), Այդպիսի շղթայով Ջիմը ցանկացած հասարակությունում չի ամաշի հանել ժամացույցը: (XX դ. ԱՊ, 29), Գայթր Այնքասեղըը հրաժարվել է նրա հետ բանակցություններ վարել: (ԱԿԴ 185), Մենք հրաժարվեցինք ընդունել: (ԱԿԴ 154):

Պետք է ասել, որ օտարաբան կառույցների կողմից գործածվում են և օրինաչափ՝ բայ-անորոշի բացառական, կառույցները: Օրինակների քննությունը հաստատում է, որ բացառականի փոխարեն ուղղականով կառույցները գերակշռում են հատկապես վերջ եղած բայերի դեպքում (վայելեալ, հրաժարվել, դադարել, ամաշել):

Ծրք համեմատում ենք տրական-ուղղական և բացառական-ուղղական կառույցները, պարզվում է, որ տրական-ուղղական տեղաշարժը ավելի հաճախ է հանդիպում:

Թեք հոլովով (տրական, բացառական) անորոշ դիրքայ-լրացում առնող բայերի մեջ առանձնանում են իրավունք ունենալ, օտիպված լինել, պատուստվել, վայելեալ, հրաժարվել, դադարել, ամաշել բայերը, որոնք ավելի հաճախ են ուղղականով լրացում առնում, քան վերջ եղած մյուս բայերը:

Այնուամենայնիվ, քննելով լեզվում առկա օտարաբան կառույցները, նշելով նրանց տեղը մեր գրական լեզվում՝ պետք է ասել, որ նման կառույցները ամենից առաջ տարբերակային ձևեր են, շարահյուսական համանիշներ:

Մեր լեզվի քերականական համակարգը խախտող, լեզվին չհարմար կառույցները պետք է համարել անընդունելի:

Ուսումնասիրելով օտարաբան կառույցները՝ չի կարելի անտեսել մի հանգամանք. ըստ մեր վածության աստիճանի լեզվական միավորների մեջ տարբերվում են որոշակի շեղուկներ.

1. Միավորներ, որոնք շատ տարածվելով՝ արդեն դարձել են լեզվի նորմա և դժվարությամբ են ընկալվում իբրև օտար ազդեցության արդյունք:

2. Միավորներ, որոնք օտար ծագումն ակնհայտ է, որոնք սակայն չի մերժում լեզվի նորման:

3. Միավորներ, որոնք խախտում են փոխառու լեզվի համակարգը. սրանք անընդունելի, սխալ ձևեր են:

Հնդհանրապես, երկրորդ և երրորդ շերտերի միավորների օտարաբան ծագումը իրարամերժ կարծիքներ չի հարուցում: Ուսումնասիրության տեսակետից ավելի հետաքրքիր են առաջին շերտի լեզվական միավորները, որոնք, նախ, տարրերվում են մյուս շերտերի միավորներից ազդեցության ժամանակով: Այսինքն, այս միավորներն ավելի վաղ շրջանի ազդեցություններ են: Այս դեպքում ժամանակի գործոնը շատ էական է. այս կարգի կառույցների օտար ծագումը գրեթե մթազնել է: Նման կառույցները միայն հանգամանալից, մանրակրկիտ քննությամբ կարող են տարբերակվել: Երկրորդ՝ այս շերտի ներսում ևս առանձնանում են ենթաշերտեր. եթե բառային ազդեցությունների օտար ծագումը կարելի է հաստատել՝ բերելով փոխազդեցության մեջ գտնվող լեզուների համապատասխան բառակազմական կաղապարները կամ տվյալ հասկացության, երևույթի հարազատությունը փոխազդող լեզվին, ապա շարահյուսական կառույցների օտար ծագումը թերևս ավելի դժվար է հաստատել:

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԲՍ — Բաֆֆի, Սամվել, Ե, 1986

Բ — Բաֆֆի, Երկեր, հտ. 1, Ե, 1962

Շ — Ալ. Շիրվանզադե, Երկեր, Ե, 1986

Մ — Մուրացան, Գևորգ Մարզպետունի, Ե, 1968

ԱԴ — Ա. Դյումա, Մարգո թագուհին, Ե, 1991

ԺՍԻ — Ժ. Սանդ, Ինդիանա, Ե, 1990

Ֆ — Ու. Ֆոլկներ, Չոր սեպտեմբեր, Ե, 1991

ՖԿ — Ֆ. Կաֆկա, Դատավարություն, Ե, 1991

ԱԿԴ — Արթուր Կոնան Դոյլ, Բրիգադիր Ժերարի սխրանքները, Ե, 1990

ՄԴ — Մ. Դյուրաս, Սիրեկանը, Ե, 1995

XX դ. ԱՊ — XX դարի ամերիկյան պատմվածք, Ե, 1986,

Ե — Երկիր օրաթերթ

Փ. Ա. СТЕПАНИАН—Иноязычные глагольные структуры в современном армянском языке.—Существование нормированных структур языка не препятствует проникновению в него иноязычных эквивалентов. Они первоначально являются параллельными формами, грамматическими синонимами, затем постепенно ассиимируются и уже не воспринимаются как варваризмы. По степени слиянности различаются определенные слои инородных языковых единиц: единицы, которые распространившись, уже стали языковой нормой и с трудом узнаются как результат иноязычного влияния; единицы, чье инородное происхождение очевидно и которые, однако, не отвергает норма языка; единицы, противоречащие системе заимствующего языка, ошибочны и неприемлемы для него.